ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/82

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Գուլաբյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 25.110.00923)

Հ. Հովհաննիսյանի (լիազորագիր, տրված՝ 18.12.2019թ.)

Վ. Բաղրամյանի (լիազորագիր, տրված՝ 19.12.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Գ. Մուրադյանի (լիազորագիր, տրված՝ 17.12.2019թ.)

«Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Թիրաբյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 67.110.1059689)

Ռ. Ահարոնյանի (լիազորագիր, տրված՝ 18.12.2019թ.)

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 09.12.2019թ.

ներկայացված (10.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/82 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գավառտրանս» ՍՊԸ-ն 09.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով սույն թվականի օգոստոսի 1-ին կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցել է նաև «Գավառտրանս» ՍՊԸ-ն՝ «ԷՍԷ ԳմբՀ» (ESE GmbH) կոնսորցիումի միջոցով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու ընաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 որոշման՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավորվել էր առաջարկել «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ին ներկայացնել հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ շտկում:

Ս.թ. դեկտեմբերի 4-ին «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը N 8 արձանագրությամբ կայացրել է որոշում՝ ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մանսակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը հայտնել է, որ երեք աշխատանքային օրվա վերջնաժամկետ է հանդիսանում ս.թ. դեկտեմբերի 9-ը, սակայն հանձնաժողովը նիստ է հրավիրել հենց 09.12.2019թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.12.2019թ. N 9 արձանագրությամբ որոշում է կայացրել հիմք ընդունելով կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը մասնակցի

հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից: Նույն արձանագրության 1.4 կետով, հիմք ընդունելով վերոգրյալ որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշել է օրենքով սահմանված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը բողոքով խնդրել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին և պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչել գնահատող հանձնաժողովի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 9-ի 9-րդ արձանագրության 1.4 կետով կայացված որոշումն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն կիրառել անգործության ժամկետ՝ առնվազն 10 օրացույցային օր:

«Գավառտրանս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. Երևանի քաղաքապետանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Երևանի քաղաքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.12.2019թ. թիվ 02/61-26737 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 11.10.2019թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 ծածկագրով բողոքի հիման վրա ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 29.11.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 որոշման համաձայն պարտավորեցվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 01.10.2019թ. թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշումը.

2. կայացնել որոշում՝ առաջարկել «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ի հետ) ներկայացնել հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ շտկում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ

ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2019թ. թիվ 8 արձանագրությամբ կայացվել է որոշում, որով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նշված փաստաթղթի համաձայն՝ փաստաթղթերը շտկելու վերաբերյալ ծանուցումը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից տրամադրվել է մասնակցին 04.12.2019թ., իսկ վերջինիս կողմից շտկված փաստաթղթերը տրամադրվել են 05.12.2019թ., ուստի հաշվի առնելով Կարգի 47-րդ կետը, համաձայն որի համապատասխան շտկումը պետք է իրականացվի երեք աշխատանքային օրվա ընթացքում, գնահատող հանձնաժողովը տրամադրված փաստաթղթերը գնահատելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ է հրավիրվել 09.12.2019թ. և Ընկերության այն դիրքորոշումը, որով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքին, որ վերոգրյալ երեք աշխատանքային օրվա վերջնաժամկետ է հանդիսանում 09.12.2019թ., սակայն հանձնաժողովը նիստ է հրավիրել հենց 09.12.2019թ., անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովը որևէ կերպ կաշկանդված չէ նիստ հրավիրել մինչև սահմանված վերջաժամկետը, այն դեպքում, որ մասնակիցը շտկված փաստաթղթերը տրամադրվել է մինչև սահմանված վերջնաժամկետը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտողությանը, որ գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները,

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերը նշված որոշմամբ գնահատող հանձնաժողովին պարտավորեցվել է միայն դադարեցնել 01.10.2019թ. թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումը, ուստի հաշվի առնելով Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթը, համաձայն որի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից, գնահատող հանձնաժողովը չի հայտարարել անգործություն, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում արդեն իսկ այն հայտարարվել է:

Վերոգրյալով պայմանավորված՝ Պատվիրատուն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով վերը նշված փաստական հանգամանքներով որոշում կայացնելիս գործել է իրավաչափ, ուստի Ընկերության կողմից բողոքով ներկայացված պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Միաժամանակ՝ հաշվի առնելով, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը թվով երրորդ բողոքն է, որը ժամանակի ձգման միտում է ենթադրում, ինչի հետևանքով Երևան քաղաքում կարող է էապես վատթարանալ սանիտարական վիճակը, ուստի կարևորելով գնման առարկայի ձեռքբերումը, Պատվիրատուն խնդրել է բողոքի քննությունն իրականացնել արագացված կարգով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>3. «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն վերջինիս միջնորդության հիման վրա ԳԲՔԱ-ՆԳ-2019/82 բողոքով ներգրավվել է որպես երրորդ անձ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունն անգործության ժամկետի ընթացքում դեռևս 10.10.2019թ. բողոքով վիճարկել է Ընթացակարգի 01.10.2019թ. պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշումը:

Նշված բողոքի քննության արդյունքներով 08.11.2019թ. որոշմամբ մերժվել է ներկայացված բողոքը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Ընդ որում, Ընկերության հայտը մերժվել էր առհասարակ, այլ չէր համարվել 1-ին տեղ զբաղեցնող և Բողոքներ քննող անձի կողմից հանձնաժողովի այդ դիրքորոշումը համարվել էր իրավաչափ:

Հետագայում, 11.11.2019թ. նույն Ընկերությունը նոր բողոք է ներկայացրել, կրկին վիճարկելով 01.10.2019թ. պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշումը: Ընդ որում՝ բողոքում ներկայացված հիմքերն ու հիմնավորումները բողոքաբերին հայտնի են եղել կամ կարող էին հայտնի լինել դեռևս առաջին բողոքը ներկայացնելու պահին:

Վերը նշված փաստերի ժամանակագրությունը համադրելով, ակնհայտ է դառնում, որ «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2-րդ բողոքը ներկայացվել է անգործության ժամկետի ավարտից գրեթե մեկ ամիս անց, այսինքն ժամկետի խախտմամբ, հետևաբար այն ենթակա չէր քննության:

Այդուհանդերձ, նշված բողոքի հիման վրա Բողոքներ քննող անձը 29.11.2019թ. կայացրել է որոշում, որով բավարարել է ներկայացված բողոքը:

Ընդ որում, թե բողոքի, թե որոշման պատճառաբանությունը ըստ կազմակերպության թեև անհիմն է, այդուհանդերձ դրանք էական չեն, քանի որ ժամկետի խախտմամբ ներկայացված բողոքն առհասարակ ենթակա չէր քննության՝ անկախ բողոքի հիմնավորվածությունից:

Փաստացի ստացվում է մի իրավիճակ, երբ բողոքաբերը տեղյակ լինելով բողոքարկման ժամկետների մասին, ըստ իրեն, ունենալով բողոքարկման մի շարք հիմքեր, սահմանված ժամկետում ներկայացրել է բողոք՝ ներառելով միայն հիմքերի մի մասը, իսկ հետագայում, արդեն ժամկետի ավարտից հետո, ներկայացրել է 2-րդ բողոքը:

Օրենսդրի կողմից անգործության ժամկետի սահմանումը, ըստ այդ բողոքարկման ժամանակահատվածի սահմանումն ի թիվս այնի հետապնդում է նպատակ նաև բացառելու նկարագրված իրավիճակը:

Այսինքն, օրենսդիրը բացառել է հավերժ բողոքարկելու հնարավորությունը, ինչը նշանակում է, որ շահագրգիռ անձին վերապահելով բողոքարկման իրավունք, դրա իրացման համար սահմանել է որոշակի չափանիշներ, այդ թվում՝ ժամանակային սահմանափակում, ինչը նշանակում է, որ բողոքաբերն իր բողոքը և դրա բոլոր հիմքերը պետք է ներկայացնի սահմանված ժամկետի ընթացքում: Ելնելով տնօրինչականության սկզբունքից, բողոքաբերը ինքն է որոշում, թե ինչ հիմքերով պետք է ներկայացնի բողոք, սակայն այդ սկզբունքի սահմանները այնքան լայն չեն, որպեսզի հանգեցնեն սահմանված ժամկետների խախտման:

Այլ կերպ ասած, բողոքաբերն իր տնօրինչականության սկզբունքից կարող է օգտվել սահմանված ժամկետի ընթացքում դրսևորելով համապատասխան վարքագիծ:

Ժամկետային սահմանափակման նպատակներից մեկն էլ այն է, որպեսզի սահմանված ժամկետում բացահայտված լինեն բոլոր հնարավոր բողոքներն ու դրանց հիմքերը և բացառվի ժամկետի ավարտից հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ որևէ գործընթացի հնարավորությունը, որպեսզի ապահովվի գնման իրավահարաբերության կայունությունը, կանխատեսելիությունը, ինչպես նաև այլ մասնակիցների իրավունքների և շահերի պաշտպանությունը:

Հարկ է նկատել, որ օրենքը, օժտելով անձին բողոքարկման իրավունքով, միաժամանակ շահագրգիռ այլ անձանց իրավունքները պաշտպանելու համար հավասարակշռությունն ապահովել է այդպիսի ժամկետ սահմանելով:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կազմակերպությունը գտնում է, որ բողոքաբերի առաջին բողոքի մերժված լինելու և անգործության ժամկետն ավարտված լինելու պայմաններում «Գավառտրանս» ՍՊԸ-ն սույն ընթացակարգի վերաբերյալ բողոք ներկայացնելու իրավունք այլևս չունի, ընդ որում՝ չուներ նաև 2-րդ բողոքի ներկայացման պահին:

Հետևաբար, անկախ «Գավառտրանս» ՍՊԸ-ի 2-րդ բողոքի կապակցությամբ կայացված որոշման առկայությունից, անգործության ժամկետի ավարտման փաստն ինքնին բավարար է արձանագրելու բողոքարկման իրավունքի բացակայությունը և չքննարկել բողոքը:

Բացի այդ, անգործության նոր ժամկետ սահմանելու պարտավորության բացակայության նման կարգ սահմանված չլինելու դեպքում անգործության ժամկետում ներկայացված բողոքների քննության ավարտից հետո կրկին սահմանվել չօ կարող: Սա է պատճառը, որ բողոքում որևէ իրավական հիմնավորում, իրավական նորմի հղում առկա

չէ: Հետևաբար բողոքը նաև ինքնին բովանդակային առումով անհիմն է և ենթակա է մերժման: Բացի այդ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջները չպահպանելու դեպքում դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը կարող է մերժել անձին նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում:

Օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ սույն օրենսգրքի 1-ին հոդվածում նախատեսված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա):

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և որոշման դեմ բերված բողոքը համարվել է անհիմն:

Դրանից հետո անգործության ժամկետն ավարտվել է:

Անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերության կողմից ներկայացված, ներկայացվող և հետագայում ներկայացվելիք որևէ բողոք իրավական հետևանքներ չի կարող առաջացնել այլ այծանց համար՝ նման բողոքարկման հնարավորության բացակայության պատճառով:

Բացի այդ, նույնիսկ բողոքների բավարարումը չի կարող հանգեցնել «Գավառտրանս» ՍՊԸ-ի որևէ իրավունքի վերականգնման, եթե նույնիսկ առկա են իրավունքի խախտումներ, քանի որ հայտի մերժման հիմքով այլևս բողոք չի կարող ներկայացվել, իսկ այլ հիմքերի, այլ մասնակիցների մասով որևէ որոշում չի կարող հանգեցնել Ընկերությանը հաղթող ճանաչելուն:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել՝ ինչ նպատակ է հետապնդում Ընկերությունն անգործության ժամկետի ավարտից հետո բողոքներ ներկայացնելով:

Ըստ www.datalex.am կայքի տվյալների՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ն 14.11.2019թ. դիմել է դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի 25.09.2019թ. թիվ 3 արձանագրության 3.3 և 4.1 կետերով կայացրած որոշումները, թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/80 որոշումը, 13.11.2019թ. թիվ 6 արձանագրության 1.2 և 1.3 կետերով կայացրած որոշումները և «Գավառտրանս» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար ու ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այսինքն վիճարկել է նաև իր կողմից ներկայացված առաջին բողոքի կապակցությամբ Բողոքներ քննող անձի 08.11.2019թ. որոշումը և հարուցվել է թիվ ԵԴ/39724/02/19 քաղաքացիական գործը:

Միաժամանակ Ընկերությունը միջնորդել է կիրառել հայցի ապահովման միջոց, այն է՝ արգելել սույն գործով պատասխանողին և այլ անձանց ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից նոր հաղթող մասնակից ճանաչելուն, նրա հետ պայմանագիր կնքելուն, դրամական միջոցներ փոխանցելուն մատակարարվող ապրանքներ ստանալուն ուղղված գործողությունների կատարումը: Դատարանի 28.11.2019թ. որոշմամբ հայցի ապահովման միջնորդությունը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 4-րդ կետով արգելել է գնումների հետ կապված վեճերով կիրառել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի գնման գործընթացի կամ գնման պայմանագրի կատարման կասեցմանը, մինչդեռ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցի ապահովման նման միջոցի կիրառումը կհանգեցնի գնման գործընթացի և գնման պայմանագրի կատարման կասեցմանը, որպիսի պահանջն ենթակա չէ բավարարման»:

Այս փաստերի համատեքստում ակնհայտ է, որ նաև հայցի ապահովման մերժման իրողությամբ պայմանավորված, բողոքաբերը ժամկետանց և անհիմն բողոքներ բերելու միջոցով նպատակ է հետապնդում փաստացի խոչընդոտել ընթացակարգի արդյունքում պայմանագրի կնքմանը: Ըստ էության, այս նպատակը բողոքաբերը բացահայտել է հենց հայցի ապահովման միջնորդությամբ, երբ դատարանին միջնորդել է կիրառել այնպիսի միջոցներ, ինչն ուղղակիորեն արգելված է օրենքով և արգելքի հիմքը գնման գործընթացի և գնման պայմանագրի կատարման կասեցման անթույլատրելիությունն է:

Ամբողջ վերոգրյալը հաշվի առնելով՝ կազմակերպությունը գտնում է, որ բողոքաբերի գործողություններն ակնհայտ խոսում են իրավունքի չարաշահման մասին, ներկայացված բողոքները, դրանց ժամանակագրությունը թույլ է տալիս դրանք գնահատել որպես իրավունքի չարաշահման դրսևորում, ինչը նպատակ է հետապնդում բացառապես այլ անձանց վնասելու, այդ թվում՝ գնման գործընթացը խաթարելու և բացառում է որևէ իրավաչափ նպատակի հասնելու հնարավորությունը, ուստի նաև քննարկվող բողոքն այս համատեքստում պետք է չքննարկվի:

«Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն բողոքի քննության նպատակով 19.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ի հետ) (հետայսու նաև՝ Կոնսորցիում) հայտը գնահատվել է բավարար և Կոնսորցիումը ճանաչվել է ընտրված մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է սահմանված կարգով Կոնսորցիումի հետ կնքել պայմանագիր:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 09.12.2019թ. ներկայացված բողոքը,

Երևանի քաղաքապետանի 16.12.2019թ. թիվ 02/61-26737 գրությունը, «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1. շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2. չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթ:

«Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում 11.11.2019թ. ներկայացվել է բողոք, որի քննության արդյունքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 29.11.2019թ. կայացվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 որոշումը՝ բողոքը բավարարելու վերաբերյալ:

29.11.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 որոշմամբ պարտավորեցվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 01.10.2019թ. թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշումը.

2. կայացնել որոշում՝ առաջարկել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ի հետ) ներկայացնել հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ շտկում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 9 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը գնահատող հանձնաժողովը 04.12.2019թ. ծանուցել է (հիմք Armeps համակարգից քաղվածք) Կոնսորցիումին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

Նույն արձանագրության համաձայն, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշել է Կոնսորցիումի հայտը գնահատել բավարար, ճանաչել ընտրված մասնակից և վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Այսպես՝ Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով:

Այսպիսով՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն պետք է տեղեկագրում հրապարակի հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, որը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Իսկ պայմանագիրը կնքվում է միայն անգործության ժամկետը լրանալուց հետո:

Ընդ որում անգործության ժամկետը կիառելի չէ միայն մեկ դեպքում, երբ հայտ ներկայացրել է միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 29.11.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 որոշման հիման վրա 04.12.2019թ. թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ դադարեցրել է «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ի հետ) հայտը բավարար գնահատելու և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, որից հետո կիրառվել է Կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը և գնահատվել Կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերը: Որից հետո Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն կոնսորցիումը ճանաչվել է ընտրված մասնակից: Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Օրենքի 10-րդ, 36-րդ հոդվածների և Կարգի 50-րդ կետի համաձայն տեղեկագրում պետք է հրապարակվի հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին և սահմանվի անգործության ժամկետ, անկախ այն հանգամանքից, որ տվյալ ընթացակարգի շրջանակներում արդեն իսկ կիրառվել է անգործության ժամկետ, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 որոշման հիման վրա դադարեցվել էր ընտրված մասնակից ճանաչելու մասին նախկինում կայացված որոշումը՝ դրանից բխող հետևանքներով և կայացվել է ընտրված մասնակից ճանաչելու մասին նոր որոշում:

Ընդ որում, անդրադառնալով «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի այն դիրքորոշմանը, համաձայն որի «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է անգործության ժամկետից հետո, քանի որ Ընթացակարգի շրջանակներում արդեն իսկ սահմանված է եղել անգործության ժամկետ, ապա գտնում եմ, որ նման դիրքորոշումն անհիմն է, քանի որ ինչպես արդեն նշվել է ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 որոշման հիման վրա դադարեցվել էր ընտրված մասնակից ճանաչելու մասին նախկինում կայացված որոշումը՝ դրանից բխող հետևանքներով (այդ թվում նաև՝ սահմանված անգործության ժամկետը) և կայացվել է ընտրված մասնակից ճանաչելու մասին նոր որոշում:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչված այն փաստին, որ գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել Կարգի 47-րդ կետով նախատեսված եռօրյա ժամկետը, քանի որ գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրվել է նշված ժամկետի վերջին օրը, ապա հայտնում եմ, որ Կարգը չի սահմանափակում մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը մինչև եռօրյա ժամկետը լրանալը ներկայացվելու դեպքում մինչև նշված ժամկետի ավարտը նիստ հրավիրելու և գնահատելու հնարավորությունը: Այլ հարց

է, որ անհրաժեշտ է պահպանել եռօրյա ժամկետում շտկված փաստաթղթերը ներկայացնելու մասնակցի իրավունքը, իսկ տվյալ դեպքում Ընկերությունը ծանուցվել է 04.12.2019թ., իսկ շտկված փաստաթղթերը ներկայացրել է 05.12.2019թ., որոնք գնահատվել են բավարար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 9 արձանագրությամբ կայացված որոշմամբ:

Գտնում եմ, որ Ընկերության բողոքը սույն մասով անհիմն է:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 09.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով www.procurement.am (նույն՝ www.gnumner.am) հասցեով գործող տեղեկագրում հրապարակել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն.

2. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նույն հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 9 արձանագրության 1.4 կետն անվավեր ճանաչելուն պարտավորեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**